# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

## ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

## ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1

Պատվիրատուն՝ <<Ախուրիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ, որը գտնվում է Շիրակի մարզ գ. Ախուրիկ հասցեում, ստորև ներկայացնում է ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով հայտարարված ՇՀ ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի /երի/ մասին տեղեկատվությունը:

| Գնման առարկայի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Չափա-բաժնի համարը | Անվանումը | Չափ-ման միա-վորը | Քանակը[1] | | Նախահաշվային գինը մեկ միավորի համար /ՀՀ դրամ/ | | Համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր) |
| | | | Առկա ֆինանսական միջոցներով[2] | ընդհանուր | Առկա ֆինանսական միջոցներով[3] | ընդհանուր | |
| 1 | | | | | | | |
| 1 | Դիզելային վառելիք /ամառային/ | լիտր | 3000 | 3000 | 460 | 460 | Ցետանային թիվը ոչ պակաս 51.0-ից, խտությունը 15 °C-ում՝ 820-845, բռնկման ջերմաստիճանը °C՝ 55 °C-ից բարձր |

| Գնման ընթացակարգի ընտրության հիմնավորումը | |
|---|---|

| Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման[4] | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագիր | Բյուջե | Արտաբյուջե |
| | | | | | |
| ... | | | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը | | | |
| Հրավերում կատարված փոփոխությունների ամսաթիվը[5] | 1 | | |
| | ... | | |
| Հրավերի վերաբերյալ պարզաբանումների ամսաթիվը | | Հարցադրման ստացման | Պարզաբանման |
| | 1 | | |
| | ... | | |

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված գները մեկ միավորի համար | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ՀՀ դրամ[6] | | | | | |
| | | Գինն առանց ԱԱՀ | | ԱԱՀ | | Ընդհանուր | |
| | | առկա ֆինանսական միջոցներով[7] | ընդհանուր | առկա ֆինանսական միջոցներով[8] | ընդհանուր | առկա ֆինանսական միջոցներով[9] | ընդհանուր |
| Չափաբաժին 1 | | | | | | | |

---

1 Լրացվում է կնքված պայմանագրով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը

2 Լրացնել տվյալ պայմանագրի շրջանակներում առկա ֆինանսական միջոցներով գնվելիք ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը, իսկ պայմանագրով նախատեսված ընդհանուր ապրանքների, ծառայությունների, աշխատանքների քանակը լրացնել կողքի «ընդհանուր» սյունակում:

3 Եթե տվյալ պայմանագրի շրջանակներում նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա լրացնել առկա ֆինանսական միջոցներով նախատեսված գումարի չափը, իսկ ընդհանուր գումարը լրացնել կողքի «ընդհանուր» սյունակում

4 Այլ աղբյուրներից ֆինանսավորվելու դեպքում նշել ֆինանսավորման աղբյուրը

5 Նշվում են հրավերում կատարված բոլոր փոփոխությունների ամսաթվերը

6 Եթե առաջարկված գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա գրել տվյալ հրավերով սահմանված փոխարժեքով Հայաստանի Հանրապետության դրամով:

7 Լրացնել տվյալ ընթացակարգի շրջանակներում առաջարկված գումարի չափը առանց ԱԱՀ, իսկ առաջարկված ընդհանուր գումարը առանց ԱԱՀ լրացնել կողքի «ընդհանուր» սյունակում

8 Լրացնել տվյալ ընթացակարգի շրջանակներում առաջարկված գումարից հաշվարկված ԱԱՀ ն, իսկ առաջարկված ընդհանուր գումարից հաշվարկված ԱԱՀ ն լրացնել կողքի «ընդհանուր» սյունակում

9 Լրացնել տվյալ ընթացակարգի շրջանակներում առաջարկված գումարի չափը՝ ներառյալ ԱԱՀ, իսկ առաջարկված ընդհանուր գումարը՝ ներառյալ ԱԱՀ, լրացնել կողքի «ընդհանուր» սյունակում

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | <<Մաքսհուր>> ՍՊԸ | 460 | 460 | | | 460 | 460 |
| 2 | | | | | | | |
| ... | | | | | | | |
| Չափաբաժին 2 | | | | | | | |
| 1 | | | | | | | |
| 2 | | | | | | | |
| ... | | | | | | | |
| Այլ տեղեկություններ | Ծանոթություն՝ Եթե գնման ընթացակարգում կիրառվել են Գնումների ոլորտը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված բանակցություններ գների նվազեցման նպատակով: | | | | | | |

Տվյալներ մերժված հայտերի մասին

| Չափա-բաժնի համարը | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքները (բավարար կամ անբավարար) | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ծրարը կազմելու և ներկա-յացնելու համա-պատաս-խանու-թյունը | Հրավեր-ով պա-հանջվող փաստա-թղթերի առկա-յությունը | Առաջարկած գնման առարկայի տեխնիկա-կան հատկանիշ-ների համա-պատասխա-նությունը | Մասնա-գիտա-կան գոր-ծունեու-թյուն | Մասնա-գիտա-կան փոր-ձառու-թյունը | Ֆինա-նսական միջոցներ | Տեխնի-կական միջոց-ներ | Աշխա-տանքա-յին ռեսուրս-ներ | Գնային առաջարկ |
| 1 | | | | | | | | | | |
| ... | | | | | | | | | | |

| | |
|---|---|
| Այլ տեղեկություններ | Ծանոթություն՝ Հայտերի մերժման այլ հիմքեր: |

| Չափա-բաժնի համարը | Ընտրված մասնակիցը | Պայմանագրի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Պայմանագրի համարը | Կնքման ամսաթիվը | Կատարման վերջնա-ժամկետը | Կանխա-վճարի չափը | Գինը | |
| | | | | | | ՀՀ դրամ | |
| | | | | | | Առկա ֆինանսական միջոցներով | Ընդհանուր[10] |
| 1 | <<Մաքսհուր>> ՍՊԸ | N ՇՄԱՄԴ-ՇՀԱՊՁԲ-11/1 | 14.01.2015 | | | 1380000 | 1380000 |
| ... | | | | | | | |

Ընտրված մասնակցի (մասնակիցների) անվանումը և հասցեն

| Չափա-բաժնի համարը | Ընտրված մասնակիցը | Հասցե, հեռ. | Էլ.-փոստ | Բանկային հաշիվը | ՀՎՀՀ[11] / Անձնագրի համարը և սերիան |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<Մաքսհուր>> ՍՊԸ | ք. Երևան Տպագրիչների 8 | Maxhur.tender@mail.ru | 1570003729100100 | 02571605 |
| ... | | | | | |

| | |
|---|---|
| Այլ տեղեկություններ | Ծանոթություն՝ Որևէ չափաբաժնի չկայացման դեպքում պատվիրատուն պարտավոր է լրացնել տեղեկություններ չկայացման վերաբերյալ: |
| Մասնակիցների ներգրավման նպատակով <Գնումների մասին> ՀՀ օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները | Հրավերը հրապարակվել է gnumner.am կայքում և էլեկտրոնային եղանակով ուղարկվել է aprang-11-1@shh.gnumner.am հասցեին |
| Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը | |
| Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց | |

[10] Եթե պայմանագիրը կնքվելու է ընդհանուր արժեքով, սակայն նախատեսված են ավելի քիչ միջոցներ, ապա ընդհանուր գինը լրացնել տվյալ սյունակում, իսկ առկա ֆինանսական միջոցների մասով՝ «Առկա ֆինանսական միջոցներով» սյունակում:

[11] Չի լրացվում, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողի հաշվառման հաշիվ չունեցող անձը:

| | |
|---|---|
| վերաբերյալ կայացված որոշումները | |
| | |
| Այլ անհրաժեշտ տեղեկություններ | |
| | |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող

| Անուն, Ազգանուն | Հեռախոս | Էլ. փոստի հասցեն |
|---|---|---|
| Լիլիթ Բաղդասարյան | 094/55-12-06 | lilitmn@mail.ru |

Պատվիրատու՝ <<Ախուրիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Տնօրեն՝ ________________ Վ. Գասպարյան

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՎԱՌԵԼԻՔԻ ԳՆՄԱՆ
N ՇՄԱՄԴ-ՇՀԱՊՁԲ-11/1

«14 01» 2015թ.

գ. Ախուրիկ

<<Ախուրիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Վ. Գասպարյանի, որը գործում է <<Ախուրիկի միջնակարգ դպրոց>> կազմակերպության կանոնադրության հիման վրա /այսուհետ՝ Գնորդ/, մի կողմից, և <<Մարքհուր>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Փամբուկյան-ի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված դիզելային վառելիք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին: գնման

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը.

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ 1380000 (մեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի՝ հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա համաձայնագրով լրացուցիչ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում. (եթե արձանագրությունը կազմվում է

տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

### 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

### 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատու՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

### 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցները ստանալիս:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ`

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերում շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արժեքային փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ` Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 հավելվածները բաղկացած 3

թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը. յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| | |
|---|---|
| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| <<Ախուրիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ | <<Մարսիուր>> ՍՊԸ |
| գ. Ախուրիկ | ք. Երևան Տպագրիչների 8 |
| ՀՎՀՀ 05802762 | ՀՎՀՀ 02571605 |
| <<Հայէկոնոմբանկ>>ՓԲԸ Գյումրու մ/ճ | <<Ամերիաբանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 1150009278770100 | Հ/Հ 1570003729100100 |
| Տնօրեն՝ Վ. Գասպարյան | Տնօրեն՝ Ա.Փամբուկյան |
| ------------------------------ | ------------------------------ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 1
«14» 01 2015թ կնքված
գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի անվանումը՝ դիզելային վառելիք

| Հ/Հ | Ապրանքների անվանումները | Չափի միավորը | Տեխնիկական բնութագիր<br>Տեխնիկական կանոնակարգ - Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 16-ի թիվ 894-Ն որոշում | |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | |
| 1 | դիզելային վառելիք /ամառային/ | լիտր | 1. Ցետանային թիվը ոչ պակաս | 51.0 |
| | | | 2. Խտությունը 15 °C-ում | 820-845 |
| | | | 3. Ստանդարտը | Տեխնիկական կանոնակարգ (ՀՀ կառավարության 2005թ.-ի հունիսի 16-ի թիվ 894-Ն որոշում) |
| | | | 4. Բռնկման ջերմաստիճանը °C | 55 °C-ից բարձր |
| | | | 5. Պայմանական նշանները | <<Վախենում է կրակից>> |
| | | | 6. Տեսքը | Մաքուր և պարզ |
| | | | 7. Մատակարարումը | Բարով |
| | | | 8. Քանակը | 3000 /երեք հազար / |

**Գ Ն Ո Ր Դ**

<<Ախուրիկի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ
գ. Ախուրիկ
ՀՎՀՀ05802762

<<Հայբիզնեսբանկ>>ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 1150009278770100

<< Ախուրիկի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ -ի տնօրեն՝
Վ. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

<<Մաքսիուր>> ՍՊԸ

ք. Երևան Տպագրիչների 8
ՀՎՀՀ 02571605
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ

Հ/Հ 1570003729100100

Տնօրեն՝ Ա.Փամբուկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 2
«14» 01. 2015թ կնքված
գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2015թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը /դրամ/ | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | | | | | | |
| 1 | Դիզելային վառելիք | լիտր | | 3000 | 460 | | | | | | | 3000 | 1380000 |
| Ընդամենը | | | | 3000 | 460 | | | | | | | 3000 | 1380000 |

**ԳՆՈՐԴ**

<<Ախուրիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
գ. Ախուրիկ
ՀՎՀՀ05802762

<<Հայբիզնեսբանկ>>ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 1150009278770100

<< Ախուրիկի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝
Վ. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<< Մարսիոր>> ՍՊԸ

ք. Երևան Տպագրիչների 8
ՀՎՀՀ 02571605
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ

Հ/Հ 1570003729100100

Տնօրեն՝ Ա.Փամբուկյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«14» 01 2015թ կնքված

գնման պայմանագրի

## Վճարման ժամանակացույց*

<<դրամ

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | I - եռամսյակ | II - եռամսյակ | III - եռամսյակ | IV- եռամսյակ | Ընդամենը |
| 1 | Դիգնային վառելիք | 100% | | | | 100% |

**ԳՆՈՐԴ**

<<Ախուրիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
գ. Ախուրիկ
ՀՎՀՀ05802762
<<Հայբիզնեսբանկ>>ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 1150009278770100

<< Ախուրիկի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ -ի
տնօրեն
Վ. Գասպարյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

<< Մարսիուր>> ՍՊԸ
ք. Երևան Տպագրիչների 8
ՀՎՀՀ 02571605
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570003729100100
Տնօրեն Ա.Փամբուկյան

/ստորագրություն/
Կ.Տ